ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

N° 2U/3-4/10126-12
20.09.2012թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 060 54 43 03

«Հարկ վճարողների պաշտպանություն»
Հ/Կ նախագահ Փ.Թադևոսյանին

Ձեր 27.06.2012թ. N013 գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ հայտնում եմ.

Մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը այն հարկ վճարողները, որոնք օրենքի համաձայն ցանկանում էին վճարել ավելացված արժեքի հարկ, պետք է ներկայացնեին հայտարարություն համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011 թվականի փետրվարի 11-ի «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N51-Ն հրամանով հաստատված դիմումի ձևով: Հայտարարության շարադրանքից հետևում էր, որ հարկ վճարողները հայտարարությունը կարող էին ներկայացնել ընթացիկ տարում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու համար և չէին կարող ներկայացնել հաջորդ օրացուցային տարում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու համար:

Ընդառաջելով հարկ վճարողների ցանկությունը 2012 թվականի հուլիսի 31-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի N238-Ն հրամանով հաստատվել է իրեն ավելացված արժեքի հարկ վճարող ճանաչելու վերաբերյալ հայտարարության նոր ձև:

2012 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած 2013 թվականի կամ հետագա տարիներին ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու համար հարկ վճարողները կարող են հայտարարությունը ներկայացնել ինչպես ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ընթացիկ տարում, այնպես էլ նախօրոք:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Վ.Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին
060-544-652